ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2011թվականի հունիսի 6–ին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի և Երևանի քաղաքապետարանի միջև կնքված պայմանագիրը, նույն թվականի հունիսի 16-ին և հոկտեմբերի 21-ին կնքված ապրանքների հանձնման-ընդունման ակտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ և 605-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղից որպես նվիրաբերություն և նվիրատվություն ընդունել գույք՝ համաձայն հ. 1 և հ. 2 հավելվածների։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011թ. հունիսի 6–ին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ու Երևան քաղաքապետարանի միջև կնքված պայմանագրի, նույն թվականի հունիսի 16-ին և հոկտեմբերի 21–ին կնքված ապրանքների հանձնման–ընդունման ակտերի համաձայն՝ որպես նվիրաբերություն և նվիրատվություն Երևանի քաղաքապետարանին տրամադրվել է գույք ՝ ըստ հ. 1 և հ. 2 հավելվածների։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597–րդ հոդվածի 1–ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից։ Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերներն ընդունելու մասին։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված հ.1
Երևան քաղաքի ավագանու
«——» դեկտեմբերի 2011թ.
N—Ա որոշման

Ց Ա Ն Կ

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից նվիրաբերված գույքի

Հ/հ	Ապրանքի անվանում	Չափի միավոր	Քանակ	ՀՀ դրամ	
				Միավորի գինը	Ընդամենը արժեքը
1	Համակարգիչ «Դեսքթոփ Ինտել Դուալ Քոր Ե7500 2.93 ՋիԷյջզեթ/ԴիԴիԷր2 2048 ՄԲ 800 ԷմԷյջզեթ/ ԷյջԴիԴի 250ԳԲ ԷսԷյԹիԷյ/ԼԱՆ օնբ./ ՄԲ Ասուս /ԴիՎիԴի-ԷռՎե/Քեյբորդ, Օփթիքալ Մաուս	հատ	1	135996	135996
2	Մոնիտոր «ԷլՍիԴի 19»	հատ	1	49800	49800
3	Անխափան սնուցման սարք «ՅուՊիԷս Մերկուրի 650Վի/Էյ»	հատ	1	15318	15318
4	Բազմաֆունկցիոնալ սարք	հատ	1	99240	99240
	Ընդամենը				300354

Հավելված հ.2
Երևան քաղաքի ավագանու
«——» դեկտեմբերի 2011թ.
N—Ա որոշման

Ց Ա Ն Կ

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից նվիրված գույքի

Հ/հ	Ապրանքի անվանում	Չափի միավոր	Քանակ	ՀՀ դրամ	
				Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	Համակարգիչ «Դեսքթոփ Ինտել Քոր 2 ԴՈՒՈ Ե7500/ ԴիԴիԷր3 2048 ՄԲ»	հատ	1	105000	105000
2	Մոնիտոր «ԷլՋի Դաբլ յու1943 ԷսԷս»	հատ	1	42000	42000
3	Անխափան սնուցման սարք «ՅուՊիԷս Մերկուրի 650 Պրո»	հատ	1	13400	13400
4	Բազմաֆունկցիոնալ սարք «Քանոն ԷմԷֆ 4410»	հատ	1	84340	84340
Ընդամենը					244740